

Aram Pachyan

Արամ Պաչյան

# Ocean

Օվկիանոս



Ocean

Օվկիանոս

Gdańsk  
2021

Tytuł oryginału: Օվկիանոս

Copyright © by Aram Pachyan

Copyright © for Polish translation by Aleksandra Majdzińska  
i Vahram Mkhitarian

Copyright © for Polish edition by Fundacja Mlecznego Brata,  
Gdańsk 2021

First published by Antares, 2014

Zrealizowano dzięki dotacji Ministra Spraw Wewnętrznych  
i Administracji



Ministerstwo  
Spraw Wewnętrznych  
i Administracji

Wydanie I

ISBN

epub 978-83-7528-256-6

mobi 978-83-7528-257-3

pdf 978-83-7528-258-0

Projekt okładki: Zuzanna Nowak

Koncepcja okładki: Vahram Mkhitarian

Skład i łamanie: Zuzanna Nowak

Redakcja i korekta: Urszula Obara

Redaktor naczelny: Fabian Cieślak

Przygotowanie do druku: Wydawnictwo Marpress sp. z o.o.,  
ul. Targ Rybny 10B, 80-838 Gdańsk, [www.marpress.pl](http://www.marpress.pl)

Wydawca:

Fundacja Mlecznego Brata

Stara Dąbrowa 40

76-231 Damnica

Aram Pachyan

# Ocean

Արամ Պաչյան  
Օվկիանոս

tłumaczenie: Aleksandra Majdzińska,  
Vahram Mkhitaryan



Wydanie niniejszego opowiadania jest realizacją pomysłu na serię prezentującą współczesną literaturę ormiańską. Chcieliśmy, by jedno opowiadanie stało się powodem do powstania jednej książeczki, wierząc, że krótka forma literacka może funkcjonować samowystarczalnie, jako osobne i niemalże wielkie dzieło.

*Ocean Arama Pachyana* jest drugim tekstem w serii książeczkowych opowiadań, pierwszym był *Brat baranek Vano Siradeghyana*.

Pamiętając o źródłach naszych inspiracji, wydajemy tę publikację jako pewnego rodzaju dług wdzięczności. Mamy nadzieję, że stanie się to zaczątkiem małej „wielkiej” serii, która pobudzi ciekawość Czytelnika i skłoni do sięgnięcia po współczesną literaturę ormiańską. Wierzimy też, że dwujęzyczność wydania będzie dodatkowym atutem, który da możliwość ubogacenia się odmiennością kulturową przy jednoczesnym zachowaniu swojej własnej.

Aleksandra Majdzińska

Vahram Mkhitaryan

Սույն պատմվածքի հրատարակությունը շարունակությունն է գրական շարքի տպագրության մեր մտահաղացման, որ ներկայացնում է հայ ժամանակակից գրականությունը: Ցանկություն կար որպեսզի մեկ արձակ գործն առիթ հանդիսանար մեկ գրքի հրատարակման՝ հավատալով նրան, որ փոքր ծավալի գործը կարող է հանդիսանալ ոչ միայն առանձին լիարժեք այլ նաեւ մեծ ստեղծագործություն:

Արամ Պաշյանի «Օվկիանոսը» երկրորդ պատմվածքն է այս գիրք պատմվածք շարքից, առաջինը՝ Վանո Սիրադեղյանի «Գառ ախպերիկ»-ն էր:

Հիշելով մեր սկզբնական ոգեշնչման աղբյուրի մասին, այս հրատարակությունը յուրատեսակ երախտագիտության արտահայտումն է, որը հույս ունենք շարունակությունը կհանդիսանա փոքր՝ ՄԵԾ գրական շարքի, որը կխթանի ընթերցողի հետաքրքրությունը դեպի հայ ժամանակակից գրականությունը: Հույս ունենք նաեւ որ երկլեզու հրատարակությունը յուրովի լրացուցիչ արժեք կհանդիսանա, հնարավորություն տալով ընթերցողին հարստանալու մշակութային բազմազանությամբ, միաժամանակ պահպանելով՝ սեփականը:

Ալեքսանդրա Մայջինսկա  
Վահրամ Մխիթարյան

Do jednostki wojskowej jechali starym, ciężkim autobusem. Siedział na przedostatnim siedzeniu, przy oknie o rozmiarze złożonego pudła, obok chłopaka z wyłupiastymi oczami. Kiedy autobus wpadał w dziurę i trząść się, zderzali się ramionami. Chłopak miał niedokładnie ogoloną głowę. Za uszami i na skroniach sterczały mu długie włosy. Rekruci śmiali się, żartowali, wystawiali głowy przez okna, pluli i pokazywali palcami na pasące się krowy. Chłopak z wyłupiastymi oczami wyjął z kieszeni cukierka. Stuknął sąsiada w ramię palcem i podał mu. Ten odmówił lekkim ruchem głowy. Mijane obrazy zmieniały się jak w filmie. Jęczmienne pola. Budynki. Klacz ze źrebakiem. Wzgórza. Kwiaty wśród kamieni. Wzgórza. Wiadra pełne grzybów. Kukurydza nadzieana na patyki i dzikiej róży. Ptaki. Wzgórza. Rower na podwórku. Wzgórza.

Chłopak z wyłupiastymi oczami schował cukierka do kieszeni. Ktoś z tylnego siedzenia powiedział mu, że źle ogolił głowę. Wszyscy wybuchnęli śmiechem. Chłopak nie odwrócił się. Na jego policzki wystąpił rumieniec. Autobus przejeżdżał przez opustoszałe okolice, znikając w szczelinach skał i wyłaniając się w dziewiczej, trawiastej przestrzeni. Na polanie od czasu do czasu tkwiło samotnie drzewo; pojawiało się nagle i topniało na szybie. Odprowadzał je wzrokiem, odwracając głowę tak mocno, na ile się da, po czym zamykał oczy i zachowywał znikający pod powiekami obraz jeszcze przez kilka chwil.

Długi czas stali w niepewności na placu musztrowym górującej nad wioską jednostki wojskowej, obserwowali ćwiczenia nowo formowanych plutonów. Porucznik przedstawił się, przeliczył ich kilka razy, odczytał imiona i nazwiska, przeliczył ponownie, zapisał coś w notesie i wydał komendę: „Równaj – baczność!”, po czym poszli za nim w stronę magazynu mundurów wojskowych.

Widział, jak jego dżinsowa kurtka i koszulka mieszały się z ubraniami innych, powoli znikając pod stosem odzieży układającej się w piramidę. Kiedy dyżurny podoficer magazynu otworzył brzegi umazanej ziemią workowatej torby i zaczął pakować do niej cywilne ubrania, on, młody rekrut, wpatrywał się w ruchy jego rąk jak zahipnotyzowany. Chciał ostatni raz zobaczyć swoje dżinsy, jednak podoficer pracował zbyt szybko, nie brał ubrań pojedynczo. Zamaszyście chwycił i zwijał po kilka naraz, mamrocząc coś pod nosem, wsuwał je do torby. Potem zarzucił ją na ramię i wyszedł z magazynu.

Poczuł, że jego nogi mimowolnie ruszyły za podoficerem, ale zatrzymał się, wyrwany z letargu krzykiem porucznika, wrócił i kontynuował ubieranie się.

Ciało z dziecięcym zdziwieniem, podobnym do tego, kiedy po raz pierwszy dotykamy gorącego żelaza, wycofało się pod ciężarem wojskowego munduru. Macał czapkę, bechatkę, spodnie, próbował wyczuć obecność czubków palców zakleszczonych w wojskowych butach. W mundurze była pustka. Wydawało się, że ciało odeszło bezpowrotnie wraz z dżinsami, z pozostałą w ich kieszeni chusteczką i z koszulką.

Przy wejściu do stołówki zanurzył ręce po łokcie w zimnej, chlorowanej wodzie koloru wiórów drzewnych. Wyjął dłonie, odwrócił i spojrzął na ich wewnętrzną stronę. Drobną ziarenką nierozpuszczalnego w wodzie chloru pokryły wszystkie linie. Nie zjadł kapuśniaku. Kiedy włożył do ust kawałek chleba, wydawało mu się, że jego ręce zanurzają się po łokcie w garnku z zimną chlorowaną wodą koloru wiórów drzewnych.

Stał w długiej kolejce w herbaciarni. Był zdeorientowany głodem, przepychanką, hałasem, ciągle tracił swoje miejsce w kolejce. Nie miał odwagi zatrzymać tych, którzy pchali się do przodu. Kupił babeczkę z rodzynkami i oranżadę gruszkową. Na placu sportowym było niewielu żołnierzy. Podszedł i oparł się o skórzanego konia gimnastycznego.

Zjadał ciasto ostrożnie, kruszył je palcem wskazującym i kciukiem, wkładał między język i podniebienie. Kiedy przekonywał się, że nie ma smaku chloru, przełykał.

Wszyscy już rozmieścili się w kwaterze. Po kolei przeszedł się wzdłuż piętrowych łóżek. Pierwsze poziomy były zajęte. Serce zaczęło bić mu szybciej. Znowu się przeszedł. W końcu znalazł jedno miejsce na dole, szybkim krokiem podszedł do łóżka, już chciał usiąść, gdy ktoś złapał go za pas. Odwrócił się. Był to jakiś chłopak z ręcznikiem zarzuconym na ramię.

- To miejsce jest zajęte, znajdź sobie inne - rzucił ostro.

Chodził tam i z powrotem, przyglądał się usadowionym na dolnych łózkach żołnierzom. Chciał podejść i poprosić, żeby ustąpili mu miejsca. Przez chwilę zbierał się na odwagę, ale gdy tylko zbliżał się do siedzącego żołnierza, odwracał się szybko i odchodził.

Wszedł porucznik, powiedział, że mają dziesięć minut na to, żeby być w łóżku, a jeśli po dziesięciu minutach zobaczy kogoś na nogach, podejmie specjalne środki. Podeszedł do porucznika, przedstawił się i cichutko powiedział, że nie może spać na górnym łóżku.

- Co, powtórz to? - porucznik pochylił głowę.

Powiedział jeszcze ciszej:

- Nie mogę spać na górnym poziomie.

Uderzenie porucznika zrzuciło rekrutowi czapkę z głowy. Rozcięło mu wargę.

- Dopiero co się pojawiłeś, a już chcesz tu zgrywać twardziela? - Porucznik złapał go za kołnierz i zaczął trząść. - Jutro zgłosisz się do dowódcy swojego plutonu, pokaże ci twój prawdziwy poziom. A teraz szybko, w ciągu pięciu minut rozbierasz się i kładziesz, a jak przyjdę i zobaczę, że nie śpisz, to cię zabiję.

Porucznik zgasił światło i wyszedł.

Stał teraz w ciemnościach, głaszcząc palcami policzek.

W uszach wciąż dzwonił mu klaps. „Chodź, tu jest miejsce, na drugim poziomie, lepsze, nie jest gorąco, no, spokojnie.” Poszedł w kierunku głosu. Rozebrał się powoli, ułożył ubrania jak należy na krześle, wspiął się na drugi poziom i wsunął się pod koc. „Za kilka godzin zacznie świtać”, powtarzał w myślach, starając się jak najszerzej otwierać oczy. Szybko je zamknął, kiedy wszedł porucznik. Zapalił i zgasił światło, wyszedł.

Po zmęczeniu dnia uspokojone na łożku ciało całkowicie odrętwiało. Ściągnął z siebie koc, oparł się o poręcz, napiął mięśnie i mocno zacisnął usta. „Będzie świtać za kilka godzin.” Z zewnątrz dochodziły odgłosy głuchego pukania. Dobiegł do niego dźwięk płynącej wody. Powieki stawały się coraz cięższe, a świadomość gasła.

Zapobiegł odptynięciu ciała, otworzył szeroko oczy, potarł skronie, potrząsnął głową. Chwyając się za wezgi łożka, niemal bezszelestnie zeskoczył na podłogę, po omacku odnalazł kaptcie, założył je i na palcach zaczął chodzić po sali. Jego oczy przyzwyczyły się do ciemności i wszystkie łożka, krzesła, szpary desek podłogowych były teraz wyraźnie widoczne. Nachylał się nad twarzą śpiącego na dolnym łożku żołnierza i przechodził do następnego. Tylko śpiący żołnierze byli potwierdzeniem, że na dolnych łożkach nie ma już wolnych miejsc! Nagle zobaczył chłopca z wyłupiastymi oczami, tego, który siedział obok niego w autobusie, któremu odmówił, gdy ten chciał go poczęstować cukierkiem. Nie wierzył w to,



Nigdy dotąd czegoś takiego nie było. To był pierwszy raz, kiedy ocean nie był widoczny. Po raz pierwszy jego niebieską nieskończoność zastępował dźwięk. Leżąc na łóżku, starał się jeszcze kontrolować ciało. Poruszał głową, nogami, rękami, macał poduszkę, prześcieradło, koc, ale nie mógł zablokować drogi dźwiękowi. Szum oceanu wlewał się przez jego szeroko otwarte oczy. Gdyby je zamknął, zobaczyłby ten przestwór. Ostatnim wysiłkiem świadomości próbował nie pozwolić opaść powiekom, jednak zapomniał się w aksamitnym pomruku oceanu.

Obudził go krzyk.

Było już jasno. Szybko odstąpił koc. Stopy leżały w kałuży moczu. Zajrzał na dół. Śpiący na pierwszym poziomie żołnierz stał teraz nagi, trzymając się metalowego łóżka, z przerażonym spojrzeniem. Jego głowa i twarz były zlane moczem. Żołnierze krzyczeli, przeklinali. Nie zauważył, jak chłopak wziął taboret, jak uderzył go w głowę, jak go pociągnął, zrzucił z łóżka, wyciągnął nóż i zaczął zadawać ciosy. Od pierwszych uderzeń poczuł w ciele ostry ból, od kolejnych – szczęście. Później nie czuł już nic, wiedział tylko, że kołysze się na oceanie i wiedział, że na oceanie nic nie widać.

Զորամաս գնում էին հին, ծանրաշարժ ավտոբուսով: Նա նստած էր նախավերջին շարքում, տուփաչափ պատուհանի մոտ, դուրս պրծած աչքերով մի տղայի կողքին: Երբ ավտոբուսն ընկնում էր փոսերի մեջ ու դղրդում, ուսերով դիպչում էին իրար: Դուրս պրծած աչքերով տղայի գլուխը լավ չէր խուզված: Տեղտեղ՝ ականջների ետևում, քունքերի վրա, երկար մազեր էին մնացել: Նորակոչիկները ծիծաղում էին, կատակներ անում, պատուհաններից դուրս էին ցցում գլուխները, թքում էին ու մատով ցույց տալիս դաշտերում արածող կովերին: Դուրս պրծած աչքերով տղան գրպանից կոնֆետ հանեց, մատով թխթխկացրեց ուսին, տվեց նրան: Գլուխը թեթև շարժելով մերժեց: Շարժանկարի պես պատկերները արագորեն փոխվում էին: Գարու դաշտեր: Տներ: Ձին քուռակի հետ: Բլուրներ: Ծաղիկներ քարերի արանքներում: Բլուրներ: Սնկով լի դուլլեր: Եգիպտացորեն՝ խաչված մասուրի ճյուղին: Թռչուններ: Բլուրներ: Հեծանիվ՝ տնամերձ բակում: Բլուրներ:

Դուրս պրծած աչքերով տղան կոնֆետը դրեց գրպանը: Ետևի նստարանից նրան ասացին, որ մազերը լավ չի խուզել: Ծիծաղ փռթկաց: Նա չըջվեց: Թշերը կարմրեցին: Ավտոբուսն անցնում էր անապատացած հողերով, կորչում ժայռերի բացվածքներում, դուրս էր գալիս ասես նոր ծնված բնության մեջ, ուր տարածությունը սկսում ու ավարտում էր խոտը: Մեկ-մեկ բացատում, լրիվ առանձնության մեջ ծառ էր երևում: Գլուխը մինչև վերջ պտտելով ճանապարհում էր հանկարծակի հայտնված ու ապակու վրա հալչող ծառին, հետո փակում էր աչքերն ու մի քանի ակնթարթ պահպանում նրան:

Բարձունքից գյուղին նայող զորամասի շարահրրապարակում երկար ժամանակ անորոշ կանգնած նայում էին նոր կազմավորվող վաշտերի շարային վարժություններին: Ներկայացավ լեյտենանտը, մի քանի անգամ հաշվեց նրանց, կարդաց անուն ազգանունները, նորից հաշվեց, ձեռքի մատյանում գրառումներ արեց, հրամայեց՝ «Հավսար-զգաստ» և տարավ զինվորական համազգեստի պահեստ:

Նա տեսավ, թե ինչպես իր ջինսե տաբատը, շապիկը խառնվեցին մյուսների հագուստներին, գնալով ծածկվեցին, մնացին բուրգի տակ: Երբ պահեստի հերթապահ ենթասպան բացեց հողոտ պարկի բերանն ու սկսեց քաղաքացիական շորերը մեջը լցնել՝ սևեռվեց նրա ձեռքի շարժումներին, ուզում էր վերջին անգամ տեսնել ջինսը, բայց ենթասպան չափից դուրս արագ էր գործում, հագուստներն առանձին-առանձին չէր վերցնում: Մեծ թաթով կոլոլում էր մի քանիսը, մրթմրթալով խոթում պարկի մեջ: Ենթասպան շալակեց պարկը, դուրս եկավ պահեստից: Ինքնաբերաբար ոտքերը շարժվեցին նրա ետևից, բայց լեյտենանտի ճշոցից ցնցված կանգ առավ, վերադարձավ ու շարունակեց հագնվել: Մարմինը զինվորական հագուստի մեջ առաջին անգամ տաք երկաթին դիպչող մանկան զարմանքով ետ քաշվեց: Մատներով նա շոշափում էր կեպին, խեբեն, տաբատը, փորձում էր զգալ սապոգների մեջ արքանված ոտնաթաթերի ներկայությունը: Զինվորական հագուստի մեջ դատարկություն էր: Մարմինն ասես անվերադարձ հեռացել էր ջինսի, նրա գրպանում մնացած թաշկինակի ու շապիկի հետ:

Ճաշարանի մուտքի մոտ ձեռքերը մինչև արմունկները մտան սառը, թեփուկագույն քլորաջրի մեջ: Վեր պարզեց թևերը, շրջեց ու նայեց ավերին: Ջրի մեջ չլուծված քլորի մանր հատիկները ծածկել էին ավերի բոլոր շառավիղները: Կաղամբով ապուրը չկերավ: Երբ հացից մի կտոր դրեց բերանը, թվաց՝ հացի փոխարեն ձեռքերը մինչև արմունկները մտան սառը, թեփուկագույն քլորաջրով լի կաթսայի մեջ:

Թեյարանում նա երկար հերթ կանգնեց: Սովածությունից, հրմշտոցից, աղմուկ-աղաղակից շփոթվել էր, հերթն անընդհատ կորցնում էր: Առաջ ընկնողներին չէր համարձակվում կասեցնել: Չամիչով կեքս ու տանձի լիմոնադ գնեց: Մարգարապարակում գինվորները քիչ էին: Գնաց, հենվեց կաշվե ցատկանժույգին:

Կեքսը զգուշորեն էր ուտում, փշրում էր ցուցամատով ու բթով, դնում լեզվի ու քիմքի արանքը: Երբ համոզվում էր, որ քլորի համ չկա, կուլ էր տալիս:

Կացարանում բոլորն արդեն տեղավորվել էին: Հերթով նա անցավ երկտեղանի մահճակալների կողքով: Առաջին յարուսները զբաղեցված էին: Սիրտը սկսեց արագ խփել: Նորից շրջեց: Վերջնամասում մեկը գտավ, արագ քայլերով մոտեցավ մահճակալին, ուզում էր նստել, երբ գոտուց բռնեցին: Շրջվեց: Սրբիչը ուսերին գցած մի տղա էր: «Էս տեղը զբաղված ա, ուրիշը գտի», – կտրուկ նետեց տղան:

Կացարանում պտտվեց մի քանի անգամ: Գնում-գալիս էր մահճակալների կողքով, նայում առաջին յարուսներին տեղավորված զինվորներին: Ուզում էր մոտենալ, խնդրել, որ իրենց տեղը զիջեն: Մի պահ խիզախում էր, բայց մահճակալին նստած զինվորին մոտենալուն պես արագ շրջվում էր ու հեռանում: Լեյտենանտը ներս մտավ, ասաց, որ քնելու համար տասը թուփերով ժամանակ է տալիս, եթե տասը թուփից ոտքի վրա մարդ տեսնի, հատուկ միջոցների կդիմի: Մոտեցավ լեյտենանտին, ներկայացավ ու կամացուկ ասաց, որ ինքը չի կարող երկրորդ յարուսում քնել: «Ինչ, նորից կրկնի»: Լեյտենանտը ծռեց գլուխը: Նա ավելի ցածր ծայնով կրկնեց. «Ես երկրորդ յարուսում չեմ կարող քնել»: Լեյտենանտի ապտակը թոցրեց կեպին: Շրթունքը պատռվեց: «Էկած, չեկած, լավ տղա ես ուզում խաղաս»: Լեյտենանտը բռնեց օձիքից, սկսեց ցնցել: «Վաղը վաշտիդ հրամանատարին կասես քեզ իսկական յարուսի տեղը ցույց կտա: Հիմա արագ, հինգ թուփերում հանվում ես ու պառկում, եկա տեսա քնած չես, մորթելու եմ»: Լեյտենանտը կացարանի լույսը հանձգրեց ու հեռացավ:

Մթության մեջ կանգնել՝ մատներով շոյում էր այտը:

Ականջների մեջ դեռ զրնգում էր ապտակը: «Արի ստեղ տեղ կա, երկրորդ յարուսում ավելի լավ ա, հով, հանգիստ»: Քայլեց ձայնի ուղղությամբ: Դանդաղ հանվեց, հագուստն ըստ կարգի դասավորեց աթոռին, բարձրացավ երկրորդ յարուս, մտավ վերմակի տակ: «Մի քանի ժամից լույսը կբացվի», – մտքում կրկնում էր՝ աչքերը ինչքան հնարավոր է լայնացնելով: Լեյտենանտը ներս մտավ, վառեց լույսը: Նա արագ փակեց աչքերը: Լույսը հանգրեց, հեռացավ:

Օրվա հոգնածությունից հետո մահճակալին խաղաղված մարմինը լրիվ թմրեց: Վերմակը քաշեց վրայից, թիկնեց ճաղաշարին, ձգեց մկաններն ու բերանը պինդ սեղմեց: «Մի քանի ժամից լույսը կբացվի»: Դրսից խուլ թխկոցներ լսվեցին: Հոսող ջրի ձայն առավ: Կոպերը գնալով ծանրանում էին, գիտակցությունը՝ խամրում:

Մարմնի ինքնահոսությունը կանխեց, լայն բացեց աչքերը, տրորեց քունքերը, թափ տվեց գլուխը: Մահճակալի գլխամասից բռնվելով համարյա անաղմուկ ցատկեց հատակին՝ շոշափելով գտավ հողաթափերը, հագավ ու ոտնաթաթերի վրա սկսեց շրջել կացարանում: Աչքերը խավարին հարմարվել էին ու պարզ երևում էին բոլոր մահճակալները, աթոռները, հատակի տախտակների կարերը: Նա դեմքը մոտեցնում էր մահճակալի առաջին յարուսին քնած զինվորի դեմքին, անցնում հաջորդին: Միայն քնած զինվորներն էին համոզում, որ մահճակալների առաջին յարուսներում ազատ տարածություն այլևս չկա: Հանկարծ նա տեսավ ավտոբուսի մեջ իր կողքին նստած դուրս պրծած աչքերով տղային, որի հյուրասիրած կոնֆետը

մերժել էր: Չհավատաց: Կռացավ, նորից ուշադիր նայեց: Նա էր: Գլուխը՝ վերմակից դուրս:

Վատ խուզված գլխին՝ տեղ-տեղ երկար մազեր: Մանկական դեմքը խաղաղ ննջում էր՝ ներքևի շրթունքը մի փոքր ցցած: Մեղմորեն ձեռքը դրեց մեջքին, ուզում էր արթնացնել նրան՝ ետ քաշեց: Հոգու խորքում համոզված էր, եթե խնդրի՝ դուրս պրծած աչքերով տղան իր տեղը անպայման կգիջի: Ձեռքը նորից երկարեց և նորից ետ քաշվեց: Նա ուղղվեց, մի քանի թուփեց կանգնեց տղայի մահճակալի մոտ ու ետ դարձավ:

«Մի քիչ էլ ու լույսը կբացվի»: Աչքերը ցավելու աստիճան ընդարձակելով՝ գլուխը դրեց բարձին: Փորձեց ինչ-որ սուր, սթափություն պահպանող բան վերհիշել: Ճանապարհի պատկերներն էին գալիս: Գարու դաշտեր: Տներ: Ձին քուռակի հետ: Բլուրներ: Ծաղիկներ քարերի արանքներում: Բլուրներ: Սնկով լի դույլեր: Եգիպտացորեն՝ խաչված մասուրի ճյուղին: Թռչուններ: Բլուրներ: Հեծանիվ՝ տնամերձ բակում: Բլուրներ:

Վեր թռավ, թվաց պատկերները երազում է տեսնում: Ձեռքերը վերմակի տակից դուրս քաշեց, մի քանի անգամ խոր շնչեց ու գլուխը կրկին դրեց բարձին: «Երկու ժամ ու լույսը կբացվի»:

արաչահի-արրրաչեեհիկամաչչհիաա-  
մոնարչչհիաա-կերաչչհիաաա-ճեվաչչհիաաա  
տամանա-գավուուուու-ֆիհիհիաաաաաա  
վ\$000000000  
վիովլաաաաաաաաչչչչչչչչ  
մաաաաաաաաաաաաաաաաաաաաաաաաաաաա  
ոուուուուուուուուուուուուուուուու

Նման բան չէր եղել: Առաջին անգամ էր, որ օվկիանոսը չէր երևում: Առաջին անգամ նրա կապույտ անսահմանությանը փոխարինում էր ձայնը: Մահճակալին պառկած նա դեռ կառավարում էր մարմինը: Շարժում էր գլուխը, ոտքերը, ձեռքերը, շոշափում բարձր, սավանը, վերմակը, բայց ձայնի ճանապարհը փակել չէր կարողանում: Օվկիանոսի ձայնը լայն բացված աչքերի միջով էր ներս լցվում և եթե աչքերը փակեր, կտեսներ նրան: Գիտակցության վերջին ճիգերով փորձեց, բաց պահել աչքերը և մոռացվեց օվկիանոսի թավշե դղրդոցի մեջ:

Ճիչը արթնացրեց նրան:

Լույսը բացվել էր: Թափով մի կողմ քաշեց վերմակը: Ոտքերը մեզի լճակի մեջ էին: Ներքև նայեց: Առաջին յարուսում պառկած զինվորը մահճակալի երկաթից բռնված, սարսափահար հայացքով, մերկ կանգնել էր: Գլուխը, դեմքը ողողված էր մեզով: Զինվորները գոռում էին, հայհոյում: Նա չտեսավ՝ ինչպես տղան վերցրեց արձողը, ինչպես խփեց իր գլխին, ինչպես քաշեց, ցած գցեց մահճակալից, հանեց դանակն ու սկսեց հարվածել: Մարմնի մեջ դանակի առաջին մուտքերից սուր ցավեր էր զգում, մյուսներից՝ երջանկություն: Հետո չէր զգում, միայն գիտեր, որ ճոճվում է օվկիանոսի վրա և գիտեր, որ օվկիանոսի վրա ոչինչ չի երևում:

